

Կ Ա Ր Գ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

1. «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.6 հոդվածի 2-րդ մասին համապատասխան, սույն կարգը սահմանում է կարգապահական վարույթի գործերը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի անդամների միջև բաշխելու հետ կապված հարաբերությունները:
2. Գործը նախապատրաստող անձը կարգապահական գործը Պալատի խորհրդին ուղարկում է Պալատի աշխատակազմի միջոցով: Պալատի աշխատակազմին կարգապահական գործը հանձնվելու պահից գործը նախապատրաստող անձի՝ Պալատին խորհրդին կարգապահական գործն ուղարկելու պարտականությունը համարվում է կատարված:
3. Պալատի աշխատակազմը պարտավոր է կարգապահական գործը հանձնել Պալատի խորհրդի անդամին գործն ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում:
4. Նշված հինգօրյա ժամկետում՝
 - 4.1. Պալատի աշխատակից հանդիսացող կարգապահական գործեր համակարգողը՝ (ա) ստուգում է կարգապահական գործի ամբողջականությունը, (բ) նշված գործի վերաբերյալ Պալատ մուտքագրված նյութերն ամրակցում է գործին, եթե դրանք չեն ներկայացվել նախապատրաստող անձին, (գ) համարակալում և դրոշմակնքում է կարգապահական գործի բոլոր էջերը (բացի փոստային անդորրագրերից), ինչպես նաև (դ) ներկայացնում է Պալատի նախագահի մակագրությանը՝ առաջարկելով սույն կարգի համաձայն խորհրդի անդամի թեկնածությունը.
 - 4.2. Կարգապահական գործը Պալատի նախագահի գրության հիման վրա հանձնվում է Պալատի խորհրդի անդամին (**այսուհետ՝ Նախագահող**):
5. Կարգապահական գործերը բաշխվում են Պալատի խորհրդի անդամների միջև ըստ ազգանունների այբբենական հերթականության, բացառությամբ սույն կարգի 7-րդ կետում նշված դեպքերի:
6. Կարգապահական գործը Պալատի գտնվելու վայրում Նախագահողին է հանձնվում համապատասխան ակտով, որտեղ նշվում են նյութերի ցանկը և էջերի քանակը: Հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից կարգապահական գործը համարվում է Պալատին խորհրդին հանձնված:

7. Կարգապահական գործերի բաշխման ընդհանուր կանոնից թույլ է տրվում շեղվել, եթե՝
 - 1) Պալատի խորհրդի անդամը ծանրաբեռնվածության կամ այլ հարգելի պատճառով չի կարող այդ գործը վարել, կամ
 - 2) Պալատի խորհրդի անդամը կարգապահական վարույթի կողմի հետ ունի մտերիմ կամ կախյալ հարաբերություններ, կամ առկա է նրա անկողմնակալությունը կասկածի տակ դնող առերևույթ հանգամանք, կամ
 - 3) կարգապահական գործի մասնագիտացումից ելնելով այդ գործը կարող է արդյունավետ վարել Պալատի խորհրդի այլ անդամ:
8. Պալատի նախագահը սույն կարգին համապատասխան գործը վերահանձնում է այլ խորհրդի անդամի, եթե՝
 - 8.1. կարգապահական գործը հանձնելուց հետո Նախագահողն ինքնաբացարկ է ներկայացրել.
 - 8.2. հնարավոր չի եղել հնգօրյա ժամկետում կարգապահական գործը հանձնել Նախագահողին:
9. Սույն կարգի 8-րդ կետում նշված դեպքում, կարգապահական գործը Պալատի խորհրդին համարվում է հանձնված գործը նախապատրաստողից ստանալու պահից հինգերորդ օրը:
10. Նախագահողը կարգապահական գործը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում միանձնյա կայացնում է որոշում՝ կարգապահական գործը վարույթ ընդունելու մասին: Կարգապահական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ Նախագահողը կարող է նշանակել Պալատի խորհրդի նիստը:
11. Կարգապահական գործը վարույթ ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, Նախագահողը պարտավոր է նշանակել խորհրդի նիստ և նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցել փաստաբանին, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, դիմող կողմին, վկաներին և կարգապահական գործին մասնակցող այլ անձանց (եթե այդպիսիք ներգրավված են գործին):
12. Պալատի խորհրդի նիստի մասին ծանուցումները, ինչպես նաև Նախագահողի որոշումները, հասցեատերերին ուղարկում է Պալատի աշխատակազմը: